«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ. ԵՐԿՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԶՈՒԳԱՄԻՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

Գուրգեն Սիմոնյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, Սոցիոլոգիայի և Իրավունքի Ինստիտուտի գիտաշխատող, բ.գ.թ.
gurgensimonyan4@gmail.com

«Նա, ով վերահսկում է անցյալը, վերահսկում է ապագան: Նա, ով վերահսկում է ներկան, վերահսկում է անցյալը»[1]*:*

Ջորջ Օրուել

Հայաստանի ինքնիշխանության վերականգնման քսանվեցերորդ տարում էլ շարունակում է արդիական մնալ «Ո՞վ ենք մենք» և «Ու՞ր ենք գնում» հիմնարար հարցերը, որոնց պատասխանելուց հետո ազգը կկարողանա և՛ հաղթահարել տնտեսական ճգնաժամը, և՛ վերականգնել ազգային մրցունակության բարձր մակարդակը, և՛ շահադրդել երկրի քաղաքական ընտրանուն իրականացնել արդյունավետ ու իրավասու պետական կառավարում:

Սամուել Հանթինգտոնի կարծիքով՝ արտաքին վտանգի դեպում ազգային նույնականացման **զգացումը** կարող է մեծանալ կամ փոքրանալ, փոխարենը այդ նույնականացման **էությունը** ավելի քիչ է ենթակա տատանումների: Գիտնականը կարծում էր, որ ինքնանույնականացումը բխում է յուրաքանչյուր մարդու բնական պահանջից. «մարդիկ ունեն հարուստ, գրեթե անսահմանափակ ինքնանույնակա-նացման աղբյուրներ: Դրանցից կարևորագույններն են՝

1. ***Կարգավիճակային*** (**ascriptive identity**) - տարիք, սեռ, արյունակցական կապ, էթնիկականություն և ռասսայական պատկանելություն:
2. ***Մշակութային*** – խմբային, ցեղային, լեզվական, ազգային, կրոնական, քաղաքակրթական պատկանելություն:
3. ***Տարածքային*** – մերձավոր շրջապատ, գյուղ, քաղաք, համայնք, նահանգ, շրջան, կլիմայական գոտի, մայրցամաք, կիսագունդ:
4. ***Քաղաքական*** – դաշնակցային և կուսակցական (լայն իմաստով՝ քվեարկելուց մինչև հասարակական շարժում) պատկանելություն, հավատարմություն առաջնորդին, շահային խմբեր, գաղափարախոսություն, ***ազգային շահեր***:
5. ***Տնտեսական*** – աշխատանք, մասնագիտություն, պաշտոն, աշխատանքային միջավայր, գործատուներ, ոլորտներ, տնտեսական ճյուղեր, արհմիություններ, դասակարգեր, պետություններ:
6. ***Սոցիալական*** – ընկերներ, ակումբներ, թիմեր, գործընկերներ, ժամանցային շրջապատ, սոցիալական կարգավիճակ»[2]:

Ինքնության ճգնաժամը ի հայտ է գալիս, երբ ազգի անգիտակցականում արմատավորված, «Հայրենիք» գաղափարը ամբողջացնող միասնականության (սոցիալմշակութային և դավանաբանական նույնականացում) և աշխարհագրականության (միևնույն իրավաքաղաքական ու տնտեսական

[1] Orwell George. Nineteen eighty-four: 1984. London, Secker & Warburg, 1949, 219 p.
[2] Хантингтон С. Кто мы?: Вызовы американской национальной идентичности. М.: АСТ, 2008, 59 с.

տարածքում) արքետիպերը բախվում են ազգի գիտակցականում առկա բազմաշերտայնության (սփյուռք՝ տարածված և բազմաշերտ հայկականություն) և պարտադրված աշխարհագրականության (տարածաշրջանային և գլոբալ տերությունների սահմանային վերաձևումների պարտադրանք) ընկալմանը: Այս պարագայում հետադիմական հայացքները անարդյունավետ են, քանի որ հազարամյա պատմությունը կամա թե ակամա արդեն ուրվագծել է այն ներկան, որում ապրում ենք: Ուստի «Ո՞վ ենք մենք» հարցին պատասխանելուց բավարար չե միայն ասել, թե **ո՞վ ենք եղել**, ավելի կարևոր է՝ հիմնվելով դրանից բխող բազմաբնույթ պատասխանների վրա, սահմանել թե **ո՞վ ենք ուզում լինել**: Միայն այդպես հնարավոր կլինի սահմանել ռազմավարական զարգացման պարադիգման՝ **ազգային շահը**, որին միտված կլինի պետական քաղաքականությունը իր ողջ ներուժով:

Մարդկության քաղաքակրթության վաղնջական ժամանակներում, երբ մարդը՝ պայմանավորված իր ստեղծարար բնույթով, սովորեց խոսքի միջոցով հաղորդել իմաստ, տարբեր երևելի և աներևույթ հասկացություններ օժտվեցին բնութագրիչ սիմվոլներով: Այդ սիմվոլների ստանդարտացման և հանրահռչակման միջոցով, մարդիկ կարողացան արդյունավետ հաղորդակցվել և փոխանակել տեղեկատվություն: Խորհրդանիշերի, կերպարվեստի, բանահյուսության, էպոսների, ճարտարապետության, ծեսերի, երաժշտության և մշակույթի այլ ճյուղերի միջոցով քաղաքակրթությունները կերտեցին աշխարհաճանաչողության վերացական (**abstractio**) մտածողություն:

Համաձայն Էրիխ Ֆրոմի, գիտակցությունը՝ լինելով եռաչափ, ընդունակ է խորաթափանց ընկալել առարկաների և երևույթների բովանդակ էությունը: Գիտակցությունը ընդգրկում է ոչ միայն գործնականում նշանակալից երևույթները, այլև մտահորիզոնի բոլոր հնարավոր հեռանկարներն ու չափումները. «Իրերի էությունը հասկանալը չի նշանակում հայտնաբերել իրերից «հետո» կամ «վրա» գտնվող ինչ-որ բան, այլ հասկանալ դրանցում էականը, այսինքն ընդհանուր և համապարփակ, երևույթների համընդհանուր հատկությունները, անկախ դրանց մակերեսային և պատահական (**logical relevance**) դրսևորումներից»[1]: Ուստի անհատի, ժողովուրդների և ազգերի ինքնաճանաչողության և ինքնահիրացման գործընթացի վրա ազդեցություն ունի ոչ միայն իրողությունների ռացիոնալ դրսևորումը, այլև դրանց բովանդակ էության թողած իռացիոնալ զուգորդություններն (**associatio**) ու ընկալումները: Ֆրոմի կարծիքով արդյունավետ մտածողության սուբյեկտը անտարբեր չէ իր մտածմունքի առարկայի հանդեպ, այլ ազդված է դրանով և գտնվում է դրա հետ որոշակի հարաբերություններում[2]:

Դա է պատճառը որ քաղաքական ազգերն ու ժողովուրդները՝ առաջնորդվելով իրենց ազգային շահերով և կառուցելով ուժեղ պետություն, մշտապես արդիականացնում, կերպափոխում և խմբագրում են ոչ միայն իրենց «պատմական» հիշողությունը, այլև «հայրենիքի» ընկալումները, որին համապատասխանեցվում են աշխարհագրական տարածքները իրենց տեղանուններով հանդերձ:

Դեռևս անտիկ աշխարհից մարդկությանը հայտնի են բազմաթիվ աշխարհագրական վայրեր, որոնք անվանակոչվել են՝ նույնականացվելով այդ տարածքների վրա կամ մերձակայքում բնակվող ազգերի, ժողովուրդների կամ դրանց վրա գերիշխանություն տարածած պետությունների անվանումներով, օրինակ՝ Արաբական թերակղզի, Հնդկական օվկիանոս, Օմանի ծոց, Ճապոնական

[1] Фромм Э. Человек для самого себя. М.: АСТ МОСКВА, 2010, 122 с.
[2] Տես նույն տեղում, 122 էջ:

ծով, Հայկական բարձրավանդակ և այլն: Եթե վերոգրյալը հատուկ է հին քաղաքակրթություններին, ապա նորերի պարագայում տեղի է ունեցել հակառակը. ժողովուրդներն ու պետություններն են փոխառել աշխարհագրական տեղանունները, օրինակ՝ Ինդոնեզիայի[1] Հանրապետություն, Կիպրոս[2], Սիրիա[3], Բոսնիա[4], ադրբեջանցի և այլն:

Կան տեղանուններ, որոնք անվանափոխվել են քաղաքական իրավիճակի փոփոխությանը համահունչ, օրինակ՝ Թուրքիա[5], որը մինչև 1922 թվականը կոչվում էր Օսմանյան կայսրություն թուրքական սուլթան Օսմանի (1258-1326) անունով:

Որոշ աշխարհագրական տեղանուններ անվանափոխվում են՝ իրականությունը միտումնավոր խեղաթյուրելու, կամ քաղաքական նկատառումներով պատմական տեղանունները մոռացության մատնելու համար: Նենգափոխվածների շարքին կարելի է դասել պատմական Ատրպատականի և այժմյան Ադրբեջանի տեղակայման վայրերի անհամապատասխանությունը: Ատրպատականը գտնվել է Արաքսից հարավ, իսկ այժմյան Ադրբեջանի տարածքը համապատասխանում է պատմական Շիրվանին կամ Աղվանքին: Մոռացության մատնվածներից է Հայկական լեռնաշխարհը, որը՝ կրելով հայկականության իմաստը, բացի ՀՀ և Արցախի տարածքներից, տարածվում է նաև այժմյան Թուրքիայում, Իրանում, Վրաստանում և Ադրբեջանում:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ պետության տարածքներով նույնականացող քաղաքական ազգը, ոչ միայն պետք է պատրաստ լինի զարգացնել և պաշտպանել իր իրավաքաղաքական ազդեցության ներքո գտնվող աշխարհագրական տարածքները, այլև՝ նույնականացնելով դրանք պատմական տարածքների հետ, ստեղծել բավարար մշակութահոգեբանական (հայրենիք, պատմական արդարություն, Մեծ Հայք) և իրավաքաղաքական համակարգ (Սահմանադրություն, պատմությանը նույնականացված վարչատարածքային բաժանման ձև, վարչատարածքային միավորների **հայկական** անվանումներ և այլն) ապագայում այդ տարածքների ազատագրման գործընթացը խթանելու համար:

Այս առումով ՀՀ Սահմանադրության «**հոդված 1**»[6]-ը, որտեղ նշված է «Հայաստանի Հանրապետություն» քաղաքական ինստիտուտի արժեքային չափորոշիչները՝ անուղղակի հղում կատարելով միջազգայնորեն ճանաչված տարածքներին, ունի խմբագրման կարիք: Սահմանադրությունները ամրագրում են ոչ միայն առկա սահմանադրականությունը բնութագրող նորմեր, այլև ապագային միտված «նորմ ցանկություններ»: Ուստի կարևոր է Սահմանադրության առաջին հոդվածում նշել աշխարհագրական տարածքը և այդ տարածքի վրա ինքնորոշված ազգի արարած պետականության ձևն ու քաղաքական, իրավական, տնտեսական մշակույթը, այլ ոչ թե քաղաքական ինստիտուտի: Աշխարհագրական տեղանվանը պետական կարգավիճակի հաստատումը հստակ երևում է Ֆրանսիայի[7],

---

[1] Ավետիսյան Կ.Մ.: Աշխարհագրական անունների բացատրական բառարան: Երևան, «Լույս» հրատ., 1969, 146 էջ:
[2] Տես նույն տեղում, 184 էջ:
[3] Տես նույն տեղում, 306 էջ:
[4] Տես նույն տեղում, 84 էջ:
[5] Ավետիսյան Կ.Մ.: Աշխարհագրական անունների բացատրական բառարան: Երևան, «Լույս» հրատ., 1969, 143 էջ:
[6] ՀՀ Սահմանադրություն. «Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:
[7] Ֆրանսիան անբաժանելի, աշխարհիկ, ժողովրդավարական և սոցիալական հանրա-

Անգլիայի[1], Ռուսաստանի[2], Իրանի[3] և մի շարք այլ երկրների Սահմանադրություններում:

Հանրագումարելով փաստենք, որ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածը պետք է ունենա հետևյալ շարադրանքը. ***«Հայաստանը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական հանրապետություն է»***: Այսպիսի ձևակերպմամբ պետության մոդել և հասարակական կարգ է սահմանվում այն աշխարհագրական տարածքին, որն ունի **«Հայաստան»** ֆիզիկական, պատմական, քաղաքական, մշակութային եվ ռազմավարական տեղանունը:

Գուրգեն Սիմոնյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ. ԵՐԿՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԶՈՒԳԱՄԻՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

Բանալի բառեր՝ *Ազգ-պետություն, ազգային շահ, Սահմանադրություն, արդիականացում, աշխարհագրական տարածք, քաղաքական ազգ, նանույնականացում*

Արտաքին և ներքին մարտահրավերների որակական և քանակական կերպափոխումները ստիպում են քաղաքական ազգին արդիականացնել քաղաքական մշակույթն ու պետական կառավարման համակարգը՝ ստեղծելով ազգային շահերի ընկալման նորարար մոտեցումներ:

Հայաստանի ինքնիշխանության վերականգնման քսանվեցերորդ տարում էլ շարունակում է արդիական մնալ ինքնանույնականացմանը և ռազմավարական հեռանկարներին վերաբերող հիմնարար հարցերը, որոնց պատասխանելուց հետո ազգը կկարողանա և՛ հաղթահարել տնտեսական ճգնաժամը, և՛ վերականգնել ազգային մրցունակության բարձր մակարդակը, և՛ շահադրդել երկրի քաղաքական ընտրանուն իրականացնել արդյունավետ ու իրավասու պետական կառավարում:

պետություն է: http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/france/france-r.htm:

[1] Որ Անգլիայի և Շոտլանդիայի երկու թագավորությունները հազար յոթհարյուր յոթ թվականի մայիսի առաջին օրը և դրանից հետո ընդմիշտ միավորվելու են մեկ թագավորության մեջ, որի անունն է Մեծ Բրիտանիա…http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/uk/uk-----r.htm:

[2] Ռուսաստանը ժողովրդավարական, ֆեդերատիվ, իրավական, պետություն է կառավարման հանրապետական ձևով: http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/russia/russia-r.htm

[3] Իրանի կառավարման ձևը Իսլամական Հանրապետությունն է, որին Իրանի ժողովուրդը՝ հիմնվելով Ղուրանի ճշմարտության և արդարադատության ինքնիշխանությանը իր վաղեմի հավատքի վրա, հավանություն է տվել 1979 թվի մարտի 29-ին և 30-ին հանրաքվեի ժամանակ, ընտրական իրավունք ունեցող մեծամասնության՝ ընտրողների 98,2 %-ի, դրական որոշման ընդունման ճանապարհով, որը տեղի ունեցավ Իմամ Հոմեյնիի գլխավորությամբ հաղթանակած իսլամական հեղափոխությունից հետո:http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/iran/iran---e.htm

Гурген Симонян

СУВЕРЕНИТЕТ И САМООПРЕДЕЛЕНИЕ ПОЛИТИЧЕСКОЙ НАЦИИ: КОНВЕРГЕНЦИЯ И ПАРАДИГМА ФИЗИЧЕСКИХ, ИСТОРИЧЕСКИХ, ПОЛИТИЧЕСКИХ И СТРАТЕГИЧЕСКИХ КАРТ СТРАНЫ

Ключевые слова: *нация-государство, национальный интерес, Конституция, модернизация, географическая територия, политическая нация, индентичность*

Качественные и количественные трансформации внешних и внутренних вызовов, заставляют политическую нацию модернизировать политическую культуру и систему государственного управления, создавая иновационные подходы понимания национальных интересов.

После восстановления суверенитета Армении прошло двадцать шесть лет, но по прежнему актуальны вопроссы идентичности и стратегической перспективы, ответив на которые нация сумеет и́ преодолеть экономический кризис, и́ реставрировать высокую степень конкурентоспособности нации, и́ мотивировать политическую элиту страны осуществлять плодотворное и компетентное управление государством.

Gurgen Simonyan

SOVEREIGNTY AND SELF-DETERMINATION OF THE POLITICAL NATION: CONVERGENCE AND PARADIGM OF PHYSICAL, HISTORICAL, POLITICAL AND STRATEGIC MAPS OF THE COUNTRY

Key words: *nation-state, national interests, Constitution, modernization, geographic therritory, political nation, identity*

Qualitative and quantitative transformations of external and internal challenges, make a political nation to modernize the political culture and system of governance, creating other approaches to understanding national interests.

After the restoration of the sovereignty of Armenia, twenty-six years passed, but the issues of identity and strategic perspectives are still relevant, responding to which the nation will be able to overcome the economic crisis, restore a high degree of competitiveness of the nation and to motivate the political elite of the country to implement fruitful and competent government of the state.